



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«13» սեպտեմբերի 2022 թվականի N 85-Ն

**ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ  
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով՝ Ստեփանավանի համայնքի ավագանին **որոշում է՝**

- Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի վճարման կարգը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ  
Աբրահամյան Հրահատ  
Մարիկյան Հայկ  
Գրիգորյան Արմեն Փ.  
Բաղդասարյան Անուշ  
Դավթյան Արմեն  
Գազինյան Ատոմ  
Պապյան Լևոն  
Նազարյան Սյուզաննա  
Կիրակոսյան Զոն  
Զուլհալյան Արմեն  
Հակոբյան Վանո  
Հակոբյան Արծրուն

Դեմ

Ձեռնպահ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

*Handwritten signature*

ՀՐԱՀԱՏ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

**ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ  
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Ստեփանավան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի վճարման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Ստեփանավան համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

**II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը**

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:

6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները:

**III. Աղբահանության վճարի հաշվարկումը**

7. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով- 200 դրամ

2) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի 1 քմ համար յուրաքանչյուր ամիս – 25 դրամ

3) շինարարական ոչ կենցաղային-խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման համար՝

ա. ըստ ծավալի մեկ խորանարդ աղբի համար -3000 դրամ

բ. ըստ զանգվածի 1 տոննա աղբի համար- 10000 դրամ

Աղբավայրում այլ համայնքների կողմից աղբի տեղադրման համար սահմանել ամսական վճար ըստ պայմանագրի- պայմանագրային

4. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ ) շինություններում աղբահանության վճարը սահմանված է ըստ շինության ընդհանուր մակերեսի (քմ)

ա. մեծածախ և մանրածախ առևտրի սրահներ, խանութներ- 100 դրամ

բ. հանրային սննդի համար նախատեսված շենք-շինություններ -100 դրամ

5. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների շենք-շինություններ-20 դրամ

ա. հանգստյան տների, հանգստյան գոտիների շենք-շինություններ – 20 դրամ

բ. բազաների, ճամբարների և սպորտի համար նախատեսված շենք-շինություններ-30 դրամ

գ. Տրանսպորտի բոլոր տիպի կայարանների (ավտոկայան, օդանավակայան, երկաթուղային կայարան) շենք-շինություններ-20 դրամ

6. Վարչական նշանակության շենք-շինություններ – 20 դրամ

ա. ֆինանսավարկային նշանակության շենք-շինություններ – 20 դրամ

բ. կապի շենք –շինություններ -20 դրամ

գ. առողջապահության նշանակության շենք-շինություններ-20 դրամ

7. Գիտական, կրթական, ուսումնական նշանակության շենք-շինություններ-5 դրամ

ա. սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային շենք-շինություններ – 15 դրամ

բ. զորանոցային շենք-շինություններ – 8 դրամ

8. Արտադրական, արդյունաբերական նշանակության շենք-շինություններ – 5 դրամ

9. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների ծառայությունների մատուցման վայրի մասով – 100 դրամ

10. Բենզալցակայաններ, գազալցակայաններ – 100 դրամ

11. Ավտոտեխսպասարկման և ավտոլվացման կետեր-100 դրամ:

#### **IV. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները**

12. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

#### **V. Այլ դրույթներ**

13. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարումների կարգը, աղբահանության վճարի վճարման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Ստեփանավանի համայնքապետի կողմից: